

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/5»**

ք. Երևան

«02» 04 2019թ.

ՀՀ ՏՁՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեն, ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Անի Օբոյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վարդան Բաղդասարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված ռեպերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1 N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ՏՁՆՆ պետական գույքի կառավարման
կոմիտե

ք. Երևան, Տիգրան Մեծի 4

ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն

Հ/Հ 900011145027

ՀՎՀՀ 02528489



(ստորագրություն)

Անի Օրոսյան

/Աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար/

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ

ք. Երևան, Մյասնիկյան 22/4

«Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ

Հ/Հ 220083335012000

ՀՎՀՀ 08417829



(ստորագրություն)

Վարդան Բաղդասարյան

/Տնօրեն/

Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ղ» դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ծառայության			մատուցման	
			չափման միավորը	ընդհանուր գինը/«Ղ» դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	50111130-1	Արտասահմանյան արտադրության ա/մ TOYOTA CAMRY 2007թ., Տոյոտա Քեմրի 2.4, 2013 թ., TOYOTA COROLLA 2010թ, Հունդաի Սոնատա 2007 թ) ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցում համաձայն Աղյուսակ 1-ի /կցվում է/՝ անհրաժեշտության առաջացման դեպքում:	դրամ	1000000	1	Կատարողը ծառայությունները մատուցում է իր գործունեության վայրում, իսկ ծառայության արդյունքը հանձնում է ք. Երևան, Տիգրան Մեծի 4	Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 15-ը

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«ՏՁՆՆ» պետական գույքի կառավարման կոմիտե

ք. Երևան, Տիգրան Մեծի 4

«Ղ» ՖՆ աշխ. գործառ. վարչություն

Հ/Հ 900011145027

ՀԿՀՀ 02528489

(ստորագրություն)
Անի Օբոյան
 /Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար/
 Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ

ք. Երևան, Մյասնիկյան 22/4

«Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ

Հ/Հ 220083335012000

ՀԿՀՀ 08417829

(ստորագրություն)
Վարդան Բաղդասարյան
 /Տնօրեն/
 Կ.Տ.



**Գնային
առաջարկ**


Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ SU-1 (տեխնիկական զննման /դիագնոստիկա/), SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի

NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակները/ ըստ չափաբաժինների
		1 չափաբաժին Արտասահմանյան արտադրության ավտոմեքլակներ՝ TOYOTA CAMRY 2007թ., Տոյոտա Քենթի 2.4, 2013 թ., TOYOTA COROLLA 2010թ., Հունդայի Սոնատա 2007 թ)
1	2	3
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում	
1	Վառելիքի սնուցման համակարգի աշխատանքի	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0
3	Յուղման համակարգի ստուգում	0
4	Արտացման համակարգի ստուգում	0
5	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
6	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0
8	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0
9	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0
10	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0
11	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0
12	ABS համակարգի ստուգում	0
13	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0
14	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0
15	Թափքի վիճակի ստուգում	0
16	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0
17	SU-2 ներառվող ծառայությունների անվանում	
18	Շարժիչի հանում և տեղադրում	30000
19	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
20	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
21	Շարժիչի վերանորոգում	30000
22	Նույնը V6-ի դեպքում	0
23	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում	6000
24	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	5000
25	Նույնը աջի համար (V6)	0
26	Նույնը ձախի համար (V6)	0
27	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	20000
28	Նույնը աջի համար (V6)	0
29	Նույնը ձախի համար (V6)	0
30	Շարժիչի քլեկի մեքանիզմի փոխարինում	5000

31	Շարժիչի գլխիկի վերանորոգում	0
32	Փականի խցուկի փոխարինում	10000
33	Նույնը V6-ի դեպքում	0

35	Նույնը V6-ի ձախի դեպքում	0
36	Նույնը V6-ի աջի դեպքում	0
37	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	5000
38	Հրիչների փոխարինում SOHC	0
39	Ատամնավոր փոկի փոխարինում	0
40	Նույնը V6-ի դեպքում	0
41	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	6000
42	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
43	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	5000
44	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
45	Մխոցային օդակների փոխարինում	0
46	Նույնը DOHC դեպքում	0
47	Նույնը V6-ի դեպքում	0
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
48	Յուղի և յուղի գոխի փոխարինում	2000
49	Յուղի պոմպի փոխարինում	0
50	Նույնը V6-ի դեպքում	0
51	Ղեկավարման բոկի վերանորոգում	0
52	Օդի գոխի փոխարինում	500
53	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	0
54	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	12000
55	Բենզամղիչի փոխարինում	9000
56	Վառելիքի գոխի փոխարինում	3000
57	Տրամյորի վերանորոգում	0
	3. Սառեցման և արտաձման համակարգ	
58	Հովհարի փոկի հանում և տեղադրում	0
59	Հովհարի հանում և տեղադրում	3000
60	Ռադիատորի հանում և տեղադրում	6000
61	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
62	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
63	Ռադիատորի վերանորոգում	40000
64	Թերմոստատի փոխարինում	6000
65	Ջրի պոմպի փոխարինում	15000
66	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
67	Ջրի պոմպի վերանորոգում	0
68	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
69	Ընդարձակող բաքի փոխարինում	0
70	Խլարարի հանում և տեղադրում	2000
71	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
72	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	0
73	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	0
74	ՓՏ-ի հանում և տեղադրում	0
75	ՓՏ-ի վերանորոգում	0
76	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	0
77	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	0
78	Վազբաչափի շարժաբերի փոխարինում	0
79	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	0
80	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	0
81	Նույնը V6-ի համար	0
82	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	30000
83	Նույնը V6-ի համար	0
84	ԱՓՏ-ի վերանորոգում	0
85	Նույնը V6-ի համար	0
86	ԱՓՏ-ի յուղի գոխի փոխարինում	12000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
87	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	0
88	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	0

89	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	0
90	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	6
91	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	0
92	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	0
93	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	0
6. Առջևի և հետևի կամրջակներ		
94	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	0
95	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում	0
96	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	0
97	Առջևի կամ հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում	0
98	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	0
7. Կախոց		
99	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	0
100	Տրավերսի հանում և տեղադրում	0
101	Չախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում	5000
102	Անվակունդի առանցքակալի փոխարինում	6000
103	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0
104	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	0
105	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0
106	Չախ կամ աջ հողակալի խցուկների փոխարինում	3500
107	Չախ կամ աջ հողակալի առանցքակալների փոխարինում	0
108	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	6000
109	Զսպանակի հանում և տեղադրում	0
110	Զսպակի հանում և տեղադրում	
111	Զսպակի վռանների փոխարինում	
112	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	6000
113	Ներքևի լծակի հանում և տեղադրում	3000
114	Ներքևի լծակի վռանների փոխարինում	2000
115	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	3500
116	Միջին ձգանի հանում և տեղադրում	0
117	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	0
118	Վերևի լծակի հանում և տեղադրում	0
119	Վերևի լծակի վռանների փոխարինում	0
120	Գնդե հողակալերի փոխարինում	6000
121	Ծայրականների հանում և տեղադրում	3500
122	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	0
123	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	3000
124	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	0
125	Հետևի զսպանակի փոխարինում	0
126	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5000
127	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	0
128	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	0
129	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	4000



132	Անվարացքի կարագավորում	5000
133	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	2000
8. Ղեկային մեխանիզմ		
134	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	6000
135	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	0
136	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	5000
137	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
138	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	0
139	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	0
9. Արգելակային համակարգ		
140	Գլխ. գլանի հանում և տեղադրում	3000
141	Գլխ. գլանի վերանորոգում	0
142	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	3000
143	Բանվ. գլանի հանում և տեղադրում	0
144	Բանվ. գլանի վերանորոգում	0
145	Արգելակային համակարգի օդահանում	1000
146	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	1000
147	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	1000
148	Առջևի սուպպորտի վերանորոգում	0
149	Հետևի սուպպորտի վերանորոգում	0
150	Արգելակային փողրակի փոխարինում	2000
151	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5000
152	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	0
153	Հետևի կոճղակների փոխարինում	5000
154	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	5000
155	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	5000
156	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	0
157	ABS-ի հանում և տեղադրում	5000
158	ABS-ի վերանորոգում	0
159	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	0
160	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	0
10. Էլեկտրասարքավորում		
161	Էլեկտրասարքավորման վերանորոգում	0
162	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	0
163	Գեներատորի հանում և տեղադրում	5000
164	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0
165	Գեներատորի վերանորոգում	8000
166	Մեկնարկիչի հանում և տեղադրում	6000
167	Մեկնարկիչի վերանորոգում	8000
168	Առջևի լապտերի հանում և տեղադրում	6000
169	Հետևի լապտերի հանում և տեղադրում	1000
170	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	0
171	Վազքաչափի հանում և տեղադրում	0
172	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	0
173	Սաքերի պանելի հանում և տեղադրում	0
174	Արագաչափի հանում և տեղադրում	0
175	Ազդանշանի հանում և տեղադրում	3000
176	Ապակեվացիչի շարժիչի հանում և տեղադրում	0
177	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	4000

178	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	0
179	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	0

180	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	0
181	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	0
182	Էլեկտրական տվիչների փոխարինում	1000
183	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1000
184	Վառոցքի մոմերի փոխարինում	8000
185	Կոնդիցիոների լիցքավորում	20000
186	Կոնդիցիոների վերանորոգում	0
11. Այլ ծառայություններ		
187	Անիվի հանում և տեղադրում	1000
188	Անվաղողի վերանորոգում	1000
189	Անիվի բալանսավորում	1000
190	Անիվի վալց	2000
SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայտուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		
1. Շարժիչ		
1	Շարժիչի բռնկ	0
2	Շարժիչի գլխիկ	0
3	Բարձիկ	35000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	20000
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	0
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	0
7	Շարժիչի փական դուրս մղող	0
8	Շարժիչի փական ներս մղող	0
9	Շարժիչի փականի խցուկ	2000
10	Ծնկաձև լիսեռ	0
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	10000
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	15000
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	0
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	0
15	Հենակային տափողակ	0
16	Մխոց	0
17	Մխոցային օղակներ	0
18	Ատամնանիվ	0
19	Ատամնավոր փոկ	0
20	Շղթա	
21	Հիդրոձգան	0
22	Հրիչ	0
23	Հիդրոհրիչ	0
24	Բաշմակ	0
25	Հանգստարար	0
26	Թափանիվ	0
27	Թափանիվի պսակ	0
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	7000
29	Շկիվ	0
30	Շարժաթև	0
31	Կարտերի միջադիր	0
32	Միջադիր	0
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	2500
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	4000
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	6000
36	Յուղի գտիչ	7000
37	Յուղի պոմպ	0
38	Յուղի պոմպի շարժաբեր	0
39	Յուղի քարտիստոն	0

40	Յուղի փողրակ	0
41	Յուղի ծորակ	0

42	Վառոցքի մում	7000
43	Ինժեկտորի ֆորսունկա	0
44	Վառելանյութի մղիչ էլեկտրական	25000
45	Վառելանյութի գտիչ	15000
46	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	0
47	Վառելանյութի փողրակ	2500
48	Աքսելերատորի ճուպան	0
49	Օդի գտիչ	11000
50	Ջերմաստիճանային տվիչ	0
51	Յուղի տվիչ	0
52	Բաշխիչ լիսեռի տվիչ	0
53	Օդի ծախսի տվիչ	0
54	Արագաչափի տվիչ	0
55	Հովհարի տվիչ	0
56	Ջրի տվիչ	0
57	Բենզոլաքի տվիչ	0
58	Մարման ընթացքի կարգավորիչ	0
59	Մարման ընթացքի տվիչ	0
60	Ղեկավարման համակարգիչ	0
61	Պարապ ընթացքի տվիչ	0
62	Դրոսելային փականի տվիչ	0
63	Թթվածնի տվիչ	0
3. Սառեցման և արտաձման համակարգ		
68	Հովհարի փոկ	0
69	Հովհար	0
70	Ռադիատոր	75000
71	Ընդարձակող բաք	0
72	Ռադիատորի փողրակ	2500
73	Թերմոստատ	15000
74	Ջրի պոմպ	35000
75	Ջրի պոմպի առանցքակալ	0
76	Ջրի պոմպի թևակ	0
77	Սառեցման հեղուկ 1 լիտր	2000
78	Ջրի պոմպի սոնանիվ	0
79	Հոլովակ	0
80	Փոկ	17500
81	Փոկ կոնդիցիոների	0
82	Ծորակ	0
83	Խլարարի ներդիր	1000
84	Խլարարի կախոց	500
85	Անուր (Խամուտ)	500
86	Խլարար	0
87	Ռեզոնատոր	0
88	Վառարանի ռադիատոր	40000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
89	Փոխանցման տուփ	0
90	ՓՏ-ի առջևի խցուկ	0
91	ՓՏ-ի հետևի խցուկ	0
92	ՓՏ-ի առանցքակալ	0
93	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0
94	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	0
95	ՓՏ-ի եղանիկ	0
96	ՓՏ-ի ատամնանիվ	0
97	Համաժամիչ	0
98	Մուֆտ	0
99	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	0
100	ԱՓՏ-ի գտիչ	18000
101	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	
102	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	

103	Տրանսմիսիոն յուղ, 1 լիտր	4500
104	ԱՓՏ յուղ, 1 լիտր	7500

105	ՓՏ-ի առաջնային լիսեռ	0
106	Հերմետիկ	2250
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
106	Բաշխիչ տուփ	0
107	Բաշխիչ տուփի խցուկ	0
108	Բաշխիչ տուփի առանցքակալ	0
109	Բաշխիչ տուփի ատամնանիվ	0
110	Բաշխիչ տուփի լիսեռ	0
111	Կարդանային լիսեռ	0
112	Էլաստիկ մուֆա	0
113	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	0
114	Կարդանային լիսեռի խաչուկ	0
6. Առջևի և հետևի կամրջակներ		
115	Հետևի կամ առջևի կամրջակ	0
116	Ռեդուկտոր	0
117	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	0
118	Դիֆֆերենցիալ	0
119	Դիֆֆերենցիալի սատելլիտ	0
120	Տանող ատամնանիվի խցուկ	0
121	Տանող ատամնանիվի առանցքակալ	0
122	Դիֆֆերենցիալի առանցքակալ	0
123	Կիսաստնի	0
124	Կիսաստնու առանցքակալ	0
125	Կիսաստնու միջադիր	0
126	Կիսաստնու խցուկ	0
127	Կարգավորիչ տափողակ	0
7. Կախոց		
128	Տրավերս	0
129	Կրոնշտեյն	0
130	Ձախ կամ աջ հողակապ	45000
131	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց	10000
132	Անվակուռնդ	30000
133	Անվակուռնդի խցուկ	0
134	Անվակուռնդի ներքին առանցքակալ	25000
135	Անվակուռնդի արտաքին առանցքակալ	0
136	Հետևի անվակուռնդի ներքին առանցքակալ	0
137	Հետևի անվակուռնդի արտաքին առանցքակալ	0
138	Ձախ կամ աջ հողակապի խցուկ	5000
139	Հարվածամեղմիչի թասակ	25000
140	Զսպանակ	0
141	Առջևի հարվածամեղմիչ	60000
142	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	0
143	Հարվածամեղմիչի վռան	0
144	Ներքևի լծակ	0
145	Ներքևի լծակի վռան	12000
146	Վերևի լծակ	0
147	Վերևի լծակի վռան	0
148	Գնդե հողակապ	19000
149	Առջևի կայունարար	0
150	Առջևի կայունարարի վռան	5500
151	Առջևի կայունարարի առջևի վռան	0
152	Հետևի զսպանակ	0
153	Հետևի ցնցամեղմիչ	50000
154	Հետևի մետաղաձող (շտանգա)	0
155	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	0
156	Հետևի անկյունագծային լծակ	0
157	Անկյունագծային լծակի վռան	0
158	Զսպակ (ռեստորա)	

159	Աջ կամ ձախ ձգան	14000
160	Ծայրակալ	14000

161	Ձգան մեջտեղի	0
162	Անվահեծ	0
	8. Ղեկային մեխանիզմ	
163	Ղեկային կայուն	0
164	Ղեկային կայունի առանցքակալ	0
165	Ղեկային կայունի խաչուկ	0
166	Հիդրոուժեղարար	0
167	Հիդրոուժեղարարի փոկ	0
168	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	0
169	Հիդրոուժեղարարի պոմպ	0
170	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	0
171	Ղեկային ձող	0
172	Ղեկային ձողի ծայրակալ	0
173	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	5000
174	Ճոճանակ	0
175	Ճոճանակի վռան	0
	7. Արգելակային համակարգ	
176	Գլխ. գլան	0
177	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0
178	Վակուումային ուժեղարար	0
179	Բանվ. գլան	0
180	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0
181	Արգելակային փողրակ	5000
182	Սուպպորտի ուղղորդիչ	0
183	Սուպպորտի մանժետ	0
184	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	30000
185	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	30000
186	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	0
187	Առջևի արգելակային սկավառակ	30000
188	Հետևի արգելակային սկավառակ	30000
189	Ձեռքի արգելակի ճուպան	0
190	ABS-ի տվիչ	0
191	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	3500
192	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2000
193	Ձեռքի արգելակի ճուպան	0
	9. Էլեկտրասարքավորում	
194	Գեներատոր	55000
195	Գեներատորի դիողային կամրջակ	28000
196	Գեներատորի ռելե	23000
197	Գեներատորի առանցքակալ	3000
198	Ստարտեր	50000
199	Ստարտերի ռելե	0
200	Ստարտերի ածուխ	15000
201	Բենդեքս	0
202	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	0
203	Առջևի լապտեր	0
204	Առջևի թարթիչ	0
205	Հետևի լապտեր	0
206	Հետևի թարթիչ	0
207	Արգելակային լապտեր	0
208	Լամպ	8000
209	Էլեկտրական անջատիչ	0
210	Էլեկտրական տվիչ	0
211	Էլեկտրական չափիչ սարք	0
212	Բռնկման կողպեք	0
213	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	0
214		0

215

Վառոցքային լարերի խուրց

0

216	Վառոցքի մովի ծայրակալ	8000
217	Վազքաչափ	0
218	Վազքաչափի ճոպան	0
219	Արագաչափ	3000
220	Ազդանշան	3000
221	Ապակելվացիչ	0
222	Ապակելվացիչի շարժիչ	0
223	Դռների կենտրոնական փական	10000
224	Ազդանշաային համակարգ	0
225	Մագնիստոլա	0
226	տրամաբարձիչ	0
227	Էլեկտրամաբարձիչի շարժիչ	0
228	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր համար	3750
ԸՆդամենը		1500000

*Պարտադիր պայման՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված, գործարանային կամ փոխարինող /բարձր որակի/:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ՏՁՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե
 ք. Երևան, Տիգրան Մեծի 4
 ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
 Հ/Հ 900011145027
 ՀՎՀՀ 02528489


 (ստորագրություն)
Անի Օրոյան
 /Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար/
 Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
 ք. Երևան, Մյասնիկյան 22/4
 «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 220083335012000
 ՀՎՀՀ 08417829


 (ստորագրություն)
Վարդան Բաղդասարյան
 /Տնօրեն/
 Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	50111130-1	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ		350 000	350 000	350 000	600 000	600 000	600 000	600 000	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ՏՋՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե
 ք. Երևան, Տիգրան Մեծի 4
 ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
 Հ/Ը 900011145027
 ՀՎՀՀ 02528489

(ստորագրություն)
Անի Օբոյան
 /Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար/
 Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
 ք. Երևան, Մյասնիկյան 22/4
 «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
 Հ/Ը 220083335012000

ՀՎՀՀ 08417829
 (ստորագրություն)
Վարդան Բաղդասարյան
 /Տնօրեն/
 Կ.Տ.



Պայմանագրի կողմ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

Պատվիրատու

ՀՀ ՏՋՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011145027
ՀՎՀՀ 02528489

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «Պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2019/5»

Պատվիրատուն՝ ի դեմս, Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության տնտեսական բաժնի պետ Ռ. Արշակյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս, _____ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
 (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
 նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն